ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՌԱՖԻԿԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ПЕТРОСЯН СУРЕН РАФИКОВИЧ

ПРОБЛЕМЫ ТРАНСФОРМАЦИИ ПОЛИТИЧЕСКОЙ ЭЛИТЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2025

Ատենախոսության թեման հաստատվել է
Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտությունների դոկտոր **Մարգարյան Մարիամ Մամիկոնի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտությունների դոկտոր **Ենգոյան Աշոտ Փայլակի**
քաղաքական գիտությունների թեկնածու **Ազատյան Խոսրովադուխտ Գարեգինի**
Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի ապրիլի 30-ին, ժամը 14:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում: Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2025 թվականի մարտի 26-ին:

ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ **Առնակ Գեորգիի Սարգսյան**

Тема диссертации утверждена в **Академии государственного управления РА**
Научный руководитель:
доктор политических наук **Маргарян Мариам Мамиконовна**

Официальные оппоненты:
доктор политических наук **Енгоян Ашот Пайлакович**
кандидат политических наук **Азатян Хосровадухт Гарегиновна**
Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита состоится 30 апреля 2025 г. в 14:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 “Политология и международные отношения” МОНКС КВОН РА. Адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.
Автореферат разослан 26 марта 2025г.

Научный секретарь
специализированного совета 056 МОНКС КВОН РА,
кандидат политических наук, доцент **Арнак Георгиевич Саргсян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացի հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման, պետականաշինության, պետության բնականոն արդիականացման, ժողովրդավարության որակի, ինչպես նաև անցումից համախմբում գործընթացի առանձնահատկությունների բացահայտման, նույնականացման և վերլուծման հրամայականով: Գլոբալացվող և ցանցային աշխարհում քաղաքական, սոցիալական և տնտեսական համակարգերի շարունակական փոխակերպումների շրջանակներում առանցքային է քաղաքական էլիտայի կերպափոխումը: Այն անկյունաքարային է ինչպես ռազմավարական ապագայի տեսլականի մշակման, պետության ինստիտուտների պատասխանատվության, արդյունքի կառավարման, այնպես էլ հասարակության, իշխանության իրականացման մշակույթի և քաղաքական ինքնության արդիականացման համար: Հարահոս փոփոխվող աշխարհում քաղաքական էլիտաների կերպափոխմամբ է պայմանավորված ռազմավարական ապագայի համարժեք մոդելավորումը, հասարակությունում իշխանական հարաբերությունների բնույթը, քաղաքական, սոցիալական, տնտեսական համակարգերի առանցքային ինստիտուտների փոխակերպման հետագիծը: Այն առավել կարևորվում է, եթե հաշվի ենք առնում ՀՀ-ում քաղաքական զարգացման տևական ճգնաժամը, հեղափոխականացված և մարգինալացված հասարակության և տրոհված (ցանցավորված) էլիտայի իրողությունը:

Քաղաքական էլիտայի կերպափոխումը առանձնահատուկ կարևորվում է 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, հատկապես նոր կորոնավիրուսի (COVID-19) պանդեմիայի, ռուս-ուկրաինական, պաղեստինա-իսրայելական հակամարտության, Արցախի Հանրապետության էթնիկ զտման, ռազմական հանցագործության և ցեղասպանության իրողության պայմաններում: Այն մասնավորապես կարևոր է ՀՀ-ի համար՝ հաշվի առնելով Ադրբեջանի կողմից համակարգված կերպով Հայաստանին և հայությանը նետված գոյաբանական մարտահրավերներն ու սպառնալիքները:

Վերոշարադրյալից ակնհայտ է, որ քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրների համապարփակ հետազոտությունը ՀՀ-ում դարձել է հրամայական: Հետևաբար անհրաժեշտ է հրաժարվել փորձի և սխալի կառավարման սկզբունքներից և, հիմնվելով գիտավերլուծական հարացույցի վրա, իսկության մեջ վերլուծել ՀՀ քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացը: Այս համատեքստում քաղաքական էլիտաների՝ որպես քաղաքական համակարգի առանցքային դերակատարների համարժեք կերպափոխմամբ է պայմանավորված աշխարհաքաղաքական նոր վերադասավորումների և համաշխարհային տնտեսական վերաբաշխման անկանխատեսելի գործընթացներում պետության և հասարակության կենսունակության երաշխավորումը: Քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրները ժողովրդավարական անցման գործընթացում և դրանց հիմնական պայմանականները, ինչպիսիք են պատմականությունը, իշխանության իրականացման մշակույթը,

քաղաքակրթական արժեքանության և սոցիալ-տնտեսական զարգացածության աստիճանը, դարձել են գիտական ուսումնասիրությունների գերակա թեմաներ: Քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրների համակարգված ուսումնասիրումը ՀՀ-ում արդիական է, քանի որ, պայմանավորված հասարակության հեղափոխականացվածության բարձր մակարդակով և աննախադեպ անվտանգային գոյաբանական սպառնալիքների ոչ համարժեք գնահատմամբ, էլիտաների հավաքագրման, փոփոխության և շրջաբերման գործընթացը պերմանենտ մարգինալ բնույթ ունի, ինչն էլ քաղաքական զարգացման շարունակական (պերմանենտ) ճգնաժամերի ձգձգման հիմնական պատճառն է:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է համակարգված ուսումնասիրել քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրները ժողովրդավարական անցումից համախմբման գործընթացում՝ քաղաքական և քաղաքացիական մշակույթների զուգամիտման, պետականաշինության մշակույթի գործառման տիրույթներում: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտելու քաղաքական էլիտայի կերպափոխման սոցիոմշակութային և էթնոմշակութային գործոնների ազդեցությունը քաղաքական զարգացման ձգձգված ճգնաժամերի հաղթահարման վրա: Վերոնշյալ նպատակներին հասնելու համար աշխատանքում՝

- **ուսումնասիրվել են** էլիտայի տեսամեթոդաբանական հիմքերը, էլիտայի դերը ու կերպափոխման էվոլյուցիան, էլիտայի դերը ժողովրդավարական անցումից համախմբման գործընթացում՝ քաղաքական համակարգի և հանրային կյանքի արժեքային կերպափոխման դինամիկայի շրջանակներում,
- **որոշակիացվել է** քաղաքական էլիտաների կերպափոխման դինամիկան, տեղն ու դերը ժողովրդավարության անցման և համախմբման գործընթացում,
- **բացահայտվել են** քաղաքական էլիտայի ժողովրդավարական կերպափոխումը խաչընդոտող ինստիտուցիոնալ, սոցիոմշակութային և էթնոմշակութային գործոնները,
- **վերլուծվել են** ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման և ձևավորման յուրահատկությունները հետխորհրդային կերպափոխումների համատեքստում,
- **ուսումնասիրվել են** ՀՀ-ում քաղաքական էլիտայի փոփոխության և շրջաբերության պայմանականներն ու չափումները իշխանության իրականացման մշակույթի համատեքստում,
- **բացահայտվել է** ՀՀ քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացի և քաղաքական զարգացման ձգձգված ճգնաժամերի կապը,
- **որոշակիացվել է** ՀՀ-ում քաղաքական էլիտայի դերը՝ որպես ժողովրդավարության որակի երաշխավորի,
- **ուսումնասիրվել և վերանայվել են** էլիտա-էլիտա, հասարակություն-էլիտա և հասարակություն-հասարակություն փոխհարաբերությունները,
- **ուսումնասիրվել են** քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրներով պայմանավորված անտոգոնիստական համագործակցության խզման պատճառները,
- **լուսաբանվել է** ինստիտուցիոնալ դիզայնի և քաղաքական էլիտաների կողմից իրականացվող քաղաքականության անհամապատասխանությունը,

• **կարևորվել է** քաղաքական էլիտան՝ որպես ժողովրդավարական համախմբման և պետականաշինության հայկական (ինդիգեն) մոդելի ձևավորման պատասխանատու:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրման օբյեկտը ՀՀ–ում քաղաքական էլիտայի կերպափոխման արժեքային բազմաչափության բացահայտման և առկա հիմնախնդիրների լուծման միջոցով քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման, համակարգի էվոլյուցիոն զարգացման, արդիականացման, պետության կենսունակության բարձրացման, ժողովրդավարական համախմբման, ժողովրդավարության որակի երաշխավորման և քաղաքական մշակույթի ժողովրդավարացման գործընթացն է:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքերն են ինչպես քաղաքական գիտության, սոցիոլոգիական, էլիտոլոգիական, միջդիսցիպլինար, այնպես էլ ընդհանուր գիտական մեթոդաբանությունն ու մեթոդիկան: Քաղաքական էլիտայի կերպափոխումների գործընթացն ուսումնասիրվել է մաքիավելիզմի, նեոմաքիավելիզմի, էլիտայի պլյուրալիստական, ժողովրդավարական էլիտիզմի արդի տեսության, ինչպես նաև քաղաքակրթական և մարդաբանական տիրույթներում: Հետազոտության մեջ, որպես հատուկ գիտական մեթոդ, կիրառվել է համեմատական վերլուծությունը՝ կառուցվածք-դերակատար (structure/agency) գործառնական մոտեցման շրջանակներում: Այս մեթոդի կիրառմամբ ուսումնասիրվել են ՀՀ-ի և հետխորհրդային երկրներում գունավոր հեղափոխությունների հետևանքով քաղաքական էլիտաների փոփոխության և կերպափոխման գործընթացները: Աշխատանքում սկզբնաղբյուրների և էմպիրիկ ուսումնասիրությունների հիմքում ընկած են ինչպես հայ, այնպես էլ օտարերկրացի հեղինակների տեսական և կիրառական հետազոտությունները, որոնք ներառում են նաև իշխանական և ոչ իշխանական հարաբերություններում քաղաքական էլիտայի ազդեցությունն արտացոլող պաշտոնական փաստաթղթեր:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Էլիտոլոգիան՝ որպես քաղաքական գիտության ինքնուրույն գիտաճյուղ, ձևավորվեց սառը պատերազմից և Կարիբյան ճգնաժամից հետո: Հանրագումարելով քաղաքական մտքում մինչ այդ առկա և մաքիավելիստական դպրոցի կողմից ամբողջացված էլիտայի մասին մոտեցումները՝ նպատակադրված ուսումնասիրվեց նախ էլիտայի կերպափոխման միջոցով փակից դեպի բաց հասարակության անցման գործընթացը, ապա՝ տարաբնույթ էլիտար խմբերի ձևավորման ու զարգացման միջոցով ժողովրդավարական կարգեր հաստատելու ուղիները: Այս բարդ և բազմաչափ խնդիրը դարձավ միջգիտակարգային ուսումնասիրման առարկա: Այնուհետև էլիտայի կերպափոխման տարբեր առանձնահատկություններով սկսեցին զբաղվել և զբաղվում են քաղաքական փիլիսոփայության, քաղաքական սոցիոլոգիայի, ինչպես նաև քաղաքական մարդաբանության և քաղաքական հերմենևտիկայի մասնագետները: Այս համատեքստում մշակվեցին և մինչ այսօր կիրառվում են ժողովրդավարական անցման և համախմբման գործընթացները՝ որպես քաղաքական զարգացման և արդիականացման մոդել: Այսպիսով, էլիտոլոգիան հայտնվեց և շարունակում է մնալ քաղաքական գիտության, սոցիալական փիլիսոփայության, սոցիալական

հոգեբանության, սոցիոլոգիայի, մշակութաբանության և մարդաբանության հատման կետում:

Էլիտայի տեսության հիմնական սկզբունքները համակարգվել են քաղաքագիտության դասականների կողմից,[1] որոնք, ի մի բերելով հունա-հռոմեական քաղաքական միտքը, հիմնավորել են կառավարող վերնախավի էլիտարության արժեքայնությունը (վալենտականությունը): Այդ հիմքի վրա 20-րդ դարի 20-30-ական թվականներին ձևավորված էլիտայի մաքիավելիստական դպրոցի հիմնադիրներ Վ. Պարետոն, Գ. Մոսկան և Ռ. Միխելսը փորձեցին պատասխանել «Ո՞վ պետք է կառավարի» հարցին: Հետագա քաղաքական զարգացումներում, պայմանավորված աշխարհաքաղաքական և քաղաքական համակարգերի խորքային կերպափոխումներով, գերակա նշանակություն ստացավ Ռ. Դալի պոլիարխիայի տեսությունը: ԽՍՀՄ փլուզումից հետո նոր անկախացած երկրներում, երբ քաղաքական գիտությունը դուրս եկավ կեղծ գիտության կարգավիճակից, առաջին հերթին սկսեցին ուսումնասիրել էլիտայի տեսության և էլիտայի կառուցվածքա-գործառնական առանձնահատկությունները՝ ըստ ժողովրդավարական անցման, գծային ազատականացման, քաղաքական զարգացման ճգնաժամերի կանխման, բազմամակարդակ սոցիալ-քաղաքական կերպափոխումների, ինչպես նաև ընդարձակված օրակարգով անվտանգության ուսումնասիրման: Ծագած

---

[1] **Парето В.,** Трансформация демократии / пер. с итал. М. Юсима, М., издательский дом «Территория будущего», 2011, (Серия «Университетская библиотека Александра Погорельского»), 208 с., **Mosca G.**, The Ruling Class. Translation by Hannah D. Kahn. McGRAW-HILL BOOK COMPANY, Inc. NEW YORK AND LONDON 1939, 515, **Michels R.,** Political parties. A Sociological Study of the Oligarchical Tendencies of Modern Democracy. Translated by Eden and Cedar Paul. Batoche Books, Kitchener 2001-266, **Weber M.**, The Theory of Social and Economic Organization; Oxford University Press, New York, Inc. 1947, **Mills W.,** The Power Elite, 1956, 431. **Meisel J.,** The Myth of the Ruling Class. Ann Arbor: University of Michigan Press, 1958, **Burnham J.,** The Managerial Revolution or What is Happening in The World Now, 1944, 278. **Schumpeter J.,** Capitalism, Socialism and Democracy. New York: Harper & Row, 1942, **Ортега-И-Гассет Х.,** Восстание масс, С. б., пер. с исп. / Х. Ортега-И-Гассет, М., ООО «Издательство АСТ», 2002, 509, **Lasswell H.,** Who Gets What, When, How; The Free Press, Glencoe, Illinois, 1953, **Lucian W. Pye, George Mct. Kahin, Guy J. Pauker,** Comparative Politics of Non-Western Countries. Volume 49, Issue 4 December, 1955, pp. 1022-1041, **Dahl R.**, Polyarchy; Participation and Opposition. New Haven and London, Yale University Press, 1971, **Sartori G.,** Democratic Theory Revisited, Vol. I: The Contemporary Debate. Chatham House Publishers, Inc. Chatham, New Jersey 1987, **Gabriel A. Almond** – Harold Dwight Lasswell, Biographical Memoir. National Academy of Science, Washington D. C., 1987, **Berger P., Luckman T.,** The Social Construction of Reality. Published by the Penguin Group, 1966, **North D., Wallis J., and Weingast B.,** Violence and Social Orders: A Conceptual Framework for Interpreting Recorded Human History. New York: Cambridge University Press, 2009, **Keller S.**, Beyond The Ruling Class: Strategic Elites in Modern Society. With a New Introduction By The Author. Transaction Publisher, New Brunswick (U.S.A.) and London (U.K.) 1991, **Dogan, M., Higley J.,** Elites, Crises, and the Origins of Regimes. Lanham: Rowman & Littlefield, 1998. **Best H., Higley J.**, Democratic Elitism: New Theoretical and Comparative Perspectives.BRILL; Leiden-Boston 2010, **Best H., Hoffmann-Lange U.,** Challenged Elites - Elites as Challengers: Towards a Unified Theory of Representative Elites., Historical Social Research, 2018, 43(4), 7-32.

հիմնախնդիրների լուծման նկատառումներով նոր անկախացած երկրներում[2], այդ թվում՝ նաև ՀՀ-ում, սկսեցին կարևորել էլիտալոգիան[3]:

---

[2] **Ашин Г. К.**, Элитология: история, теория, современность: монография, М., Гос. Ин-т междунар. отношений (ун-т) МИД России, каф. Философии, М., МГИМО – Университет. 2010. – 610с, **Ашин Г., Понеделков А., Старостин А., Кислицын С.,** Основы политической элитологии. Изд. 4-е, стереотип. М.: ЛЕНАНД. 2018., 520 с., **Гаман-Голутвина О. В.,** Трансформация роли элит и этики госслужбы в условиях глобализа- ции. Материалы Конгресса МАПН (Квебек). Вестник РАПН., М., 2000, **Ачкасов В. А.,** Российская правящая элита и построение эффективного, конкурентоспособного государства. Власть и элиты в российской трансформации, под. ред. А. В. Дуки, Спб. Интерсоцисс, 2005, **Старостин А. М.,** Современные российские элиты: нд пути к новой конфигурации; Власть. 2003, **Крыштановская О. В.,** Анатомия российской элиты. М.: Захаров, 2005, **Ривера Ш. В.**, Тенденции формирования состава посткоммунистической элиты России: репутационный анализ, Полис 1995, **Гельман В.**, Тарусина И. Г. Изучение политических элит в России: Проблемы и альтернативы; Элитизм в России: За и против. Пермь. ПГУ, 2002.

[3] **Մարգարյան Մ. Մ.,** Հայ քաղաքական էլիտա. տեսություն և պրակտիկա, Երևան, Մխիթար Գոշ, 1996, **Մարգարյան Մ.**, Քաղաքական էլիտա, ուսումնական ձեռնարկ, «Պետական ծառայություն», Երևան, 1999, **Մարգարյան Մ.,** Կառավարող էլիտայի տրանսֆորմացիան (կերպափոխումը) ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման պայմաններում: Պետական կառավարման ժողովրդավարացման հիմնահարցերը (գիտաժողովի նյութերի ժողովածու), Երևան, ՀՀԿԴ, «Պետական ծառայություն», էջ 60-75, **Մարգարյան Մ.,** Կառավարող ընտրանին պետական կառավարման համակարգում, «Հանրային կառավարում», 2004, N1.2, էջ 96-108, **Մարգարյան Մ.,** Քաղաքական ընտրանու հավաքագրման ուղիները անցումային հասարակություններում, «Հանրային կառավարում», 2004, N3, 4, էջ 89-107, **Մարգարյան Մ.**, Հոգնականությունն ընտրանու տեսության կառուցվածքում, «Հանրային կառավարում», 2005, N2, էջ 107-125, **Մարգարյան Մ.,** Քաղաքացիավարական ցիվիլարխիկ բյուրոկրատիան որպես ընտրանի**,** «Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի», 2005, N3, էջ 121-132**, Մարգարյան Մ.,** Ազգային մտահայեցողությունը կառավարող ընտրանու վարքաբանությունում, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 2005 թ., N1 (22), էջ 177-188, **Մարգարյան Մ.,** Կառավարող ընտրանու կերպափոխումը ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման պայմաններում, «Պատմություն և կրթություն», 2006, N 3-4, էջ 69-74, **Մարգարյան Մ.,** Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Պետական ծառայություն, 2006, 391 էջ, **Մարգարյան Մ.,** Ընտրանու տիպերը և իշխանության լեգիտիմության հիմնահարցը, «Հանրային կառավարում» գիտական հանդես, N1, 2007, էջ 124-150, **Margaryan M.,** Political elites and problems of democratic transition in the Republic of Armenia, RJOOIJA,T Research Journal of the ooi Junior Academy, Transactions on 2010, Pp. 168-177, **Margaryan M.,** Political elites and problems of democratic transition in the Republic of Armenia, Публичное управление и территориальное развитие: новые тенденции и перспективы: материалы ежегод. междунар. науч.-практ. конф., Иркутск, 26–27 мая, 2016, Иркутск, Изд-во БГУ, 2016, 166 с., **Մարգարյան Մ.,** Ազգային ինքնությունը քաղաքական ընտրանու վարքաբանությունում, «Հանրային կառավարում», ՀՀ ՊԿԱ գիտական հանդես, 2016, N 1, էջ 141-150, **Մարգարյան Մ.**, Քաղաքական ընտրանու իշխանության իրականացման մշակույթի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Հանրային կառավարում», ՀՀ ՊԿԱ գիտական հանդես, 2016, N 3, էջ 168-177, **Margaryan M.,** Political elite as the actor of effective participation of the RA in the process of globalization, Проблемы национальной идентичности в контексте современной глобализации: материалы международной

Ժողովրդավարության անցման և համախմբման հիմնախնդիրների արդի ուսումնասիրությունների շրջանակներում, քաղաքական էլիտայի որոշիչ դերին զուգահեռ, վերարժևորվեց և կարևորվեց հասարակության դերը[4]: Այն ենթադրում է էլիտիզմի մեթոդաբանությունից անցում ժողովրդավարական էլիտիզմի արդի տեսության[5]: Նշված տեսությունն ու մեթոդաբանությունը կիրառված են նաև մեր աշխատանքում: Հետազոտությունն իրականացվել է նաև կառուցվածք-դերակատար (structure/agency) հարացույցի շրջանակներում, որտեղ հիմնախնդիրների լուծման համար օգտագործվել են տարբեր տեսաբանների գիտական աշխատանքներ և հոդվածներ[6]:

научной конференции, 3-4 ноября 2017, Ер.: Изд-во РАУ, 2017. 164 с., **Մարգարյան Մ.**, Մերիտոկրատական ընտրանին քաղաքական արդիականացման դերակատար, «Հանրային կառավարում» ՀՀ ՊԿԱ գիտական հանդես, 2019, N 2, էջ 174-184, **Մարգարյան Մ. Պետրոսյան Ս., Քաղաքական արդիականացում. ընտրանի-հասարակություն փոխհարաբերությունների հիմնախնդիրները** Հայաստանի Հանրապետությունում, «Հանրային կառավարում» ՀՀ ՊԿԱ գիտական հանդես, 2019, N 1, էջ 203-216, **Ghaplanyan I.**, POST SOVIET ARMENIA; The National Elite and the New National Narrative. Routledge 2018, **Կ. Ալթունյան,** Քաղաքական ընտրանու հավաքագրման բյուրոկրատական որոշ ասպեկտների շուրջ, «Հանրային կառավարում» գիտական հանդես, № 1, Եր., 2017, էջ 179-187:

[4] **Diamond L.**, III Winds, Saving Democracy From Russian Rage, Chinese Ambition, And American Complacency, New York, Penguin Press, 2019**, Levitsky S. and Ziblatt D.**, How democracies die. Crown, New Yoork, 2018, **Norris P., Inglehart R.**, Cultural backlash: Trump, Brexit, and the rise of authoritarian-populism, New York, NY: Cambridge University Press, 2019. Heydarian R. J., The Rise of Duterte; A Populist Revolt against Elite Democracy, Palgrave Macmillan, 2018.

[5] **Best H., Higley J.**, Democratic Elitism: New Th eoretical and Comparative Perspectives.BRILL; Leiden-Boston, 2010, **Best H., Higley J.**, The Palgrave Handbook of Political Elites, Palgrave Macmillan, 2018.

[6] **Мельвиль А. Ю.**, Выйти из "гетто": о вкладе постсоветских исследований/Russian Studies в современную политическую науку. – Полис. Политические исследования. 2020. № 1. С. 22-43, **O'Donnel G.,** Delegative Democracy?. The Helen Kellog Institute for International Studies. 1993, **Լինց Խ., Ալֆրեդ Ս.**, Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները. հարավային Եվրոպա, Հարավային Ամերիկա և հետկոմունիստական Եվրոպա/ Խուան Լինց, Ալֆրեդ Ստեփան, Եր., Կովկասի ինստիտուտ, 2011-620, **Fukuyama F.,** Political Order and Political Decay: From the Industrial Revolution to the Globalization of Democracy.First edition 2014, **Lipset S. M.**, The Social Requisites of Democracy Revisited: 1993 Presidential Address. American Sociological Review, Vol. 59, No. 1. (Feb., 1994), **Fukuyama F.**, 30 Years of World Politics: What Has Changed? Journal of Democracy, Volume 31, Number 1, January, 2020, pp. 11-21**, Lauth H. J.**, The Matrix of Democracy. A Three-Dimensional Approach to Measuring the Quality of Democracy and Regime Transformations. WAPS (2015) 6: 1-30, **Mainwaring S. and Bizzarro F.**, The Fates of Third-Wave Democracies. Journal of Democracy Volume 30, Number 1, January, 2019, **Andre A., Depauw S.**, The Quality of Representation and Satisfaction with Democracy: The Consequences of Citizen-Elite Policy and Process Congruence. Springer Science, Business Media New York 2016, **Дин М.**, Правительность: Власть и правление в современных обществах. – М., Издательскиий дом «Дело» РАНХиГС, 2016, 592 с.

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության առջև դրված խնդիրների իրագործման ընթացքում ձեռք բերված արդյունքները տեսական և գործնական նշանակություն ունեն: Դրանցից մի քանիսը հիմնավորվել են որպես գիտական նորույթ: Այսպես.

1. Կարևորվել են ժողովրդավարական անցումից համախմբում հարացույցի գործառնման արժեքային բազմաչափության մեխանիզմները՝ որպես քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման երաշխիքներ: Այդ համատեքստում քաղաքական էլիտաների կերպափոխման գործընթացն ուսումնասիրվել է գծային ազատականացման և ազգային ինքնության բնականոն արդիականացման զուգամիտմամբ:

2. Քաղաքական էլիտաների կերպափոխման գործընթացը դիտարկելիս փաստարկել ենք, որ ակադեմիական գրականության մեջ «կերպափոխում» (transfomation) և «շրջաբերում» (circulation) հասկացությունները տարանջատված չեն: Այս առումով, ռացիոնալ-իրավական մոտեցումից բացի, հաշվի են առնվել մարդաբանական և սոցիալ-հոգեբանական գործոնները: Քաղաքական էլիտաների շրջաբերումը կարող է նաև չհանգեցնել քաղաքական էլիտայի ինչպես որակական փոփոխության, այնպես էլ իրականացվող քաղաքականության արդյունքի ապահովման: Սակայն, մեր համոզմամբ, կերպափոխումը երաշխավորում է և՛ արդյունքի ապահովում, և՛ կառավարում: Քաղաքական էլիտաների կերպափոխումը, լինելով առավել համալիր գործընթաց, ներառելով սոցիալական բազայի փոփոխություն և շրջաբերություն, միևնույն ժամանակ, իրավիճակով պայմանավորված, կարող է մարգինալացնել գործընթացները: Այսպիսով, **«քաղաքական էլիտաների կերպափոխումը հանրային գերակա շահի արժեքային տիրույթում, որպես հանրային քաղաքականության որակական փոփոխության հիմք, ենթադրում է ներծին (Indigenous) քաղաքական նախագծի մշակում և իրականացում»**:

3. ՀՀ-ում քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման ուղիները վերլուծվել են բնականոն արդիականացման սկզբունքների հիմքի վրա՝ որպես ժողովրդավարական համախմբման կայացման պայման: Նման մոտեցմամբ քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացը ներկայացրել ենք որպես սոցիալական պատասխանատվության, հանրային համակեցության և ազգային անվտանգության ապահովման ընդարձակված օրակարգի համալիր ամբողջություն:

4. Ժողովրդավարական անցման երկրներում քաղաքական էլիտա-հասարակություն փոխհարաբերություններն ունեն հեղափոխականացված և մարգինալ բնույթ: Հետևաբար, քաղաքական էլիտաների գաղափարական տարամիտվածության խոսույթը ձևական է, քանի որ իշխանության համար պայքարող քաղաքական էլիտաները գտնվում են լատենտ «փոխհամաձայնեցված խմբիշխանական» հարաբերություններում, որոնք էլ կրում են ընդգծված պոպուլիստական բնույթ:

5. Հիմնավորելով ՀՀ-ում քաղաքական էլիտայի և քաղաքական վերնախավի տարանջատման անհրաժեշտությունը՝ էլիտայի գործառնման հիմքում կարևորվել է արժեբանական բաղադրիչը՝ իր պատմական հիշողությամբ, երևույթների միջև կապը իսկության մեջ տեսնելու ունակությամբ, ինչպես նաև արդյունքի կառավարման շահագրգռվածությամբ: Առաջարկում ենք քաղաքական էլիտան դիտարկել որպես

«հանրային, խմբային և անձնական արժեշահային համակարգի զուգամիտման միջոցով ռազմավարական ապագան մոդելավորող և դրա իրագործումն ապահովող անձանց խումբ, որը մասնակցում է և ազդեցություն է ունենում պետական կամ վերպետական մակարդակում քաղաքական որոշումների ընդունման և իրականացման վրա, ինչպես նաև պատասխանատու է դրանց համար»:

6. ՀՀ-ում ժողովրդավարության անցման և համախմբման հարացույցի իրականացման, ինչպես նաև քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման շրջանակներում, քաղաքական էլիտաների համարժեք կերպափոխման բացակայությամբ պայմանավորված, ներմուծվել է **«քաղաքական էլիտայի կերպափոխման ճգնաժամ»** եզրույթը: Այն սահմանվում է որպես **«քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման և պետության բնականոն արդիականացման գերակայության շրջանակներում քաղաքական էլիտաների մարդաբանական, ռացիոնալ-իրավական և սոցիալ-հոգեբանական մակարդակներում համարժեք կերպափոխման անկարողություն»:**

7. Քաղաքական էլիտաները դիտարկելով որպես ժողովրդավարության որակի գլխավոր երաշխավոր՝ համակողմանի ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ ՀՀ-ում տեղի է ունեցել «արդիականացում առանց զարգացման», ինչն էլ հանգեցրել է քաղաքական զարգացման ճգնաժամերի. պետության ազգային մոդելի փոխարեն փաստացի կիրառվել է «իզոմորֆիկ նմանակումը»: Այս համատեքստում փորձ է արվել գիտավերլուծական հարացուցի շրջանակներում մշակել պետության՝ որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտի բնականոն արդիականացման և ժողովրդավարական համախմբման ազգային մոդել:

8. ՀՀ-ում էլիտաների կերպափոխման գործընթացում հաստատված քաղաքական մշակույթի կերպը համարելով «սահմանափակ-հպատակային»՝ առաջարկվել է վերանայել դրա հիմքում դրված արժեշահային և մշակութա-իմացաբանական մատրիցան՝ միտված **քաղաքակրթական քաղաքական նախագծի ապագաբանական արդիականացմանը**: Այս հիմքի վրա մշակվել է ազգային արժեշահային և մշակութա-իմացաբանական մատրիցա, որը հիմնված է **ազգային ինքնության, ոգեղենության, հոգևոր անվտանգության, հասարակության կենսունակության, ինքնահիրացման և սոցիալական պատասխանատվության դասիչների վրա:**

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Գիտական ուսումնասիրության շրջանակներում համակարգված վեր են հանվել ինչպես տեսական, այնպես էլ գործնական արդիական հիմնախնդիրներ: Իրականացված համակարգային վերլուծություններն ու արված առաջարկությունները կարող են օգտակար լինել ինչպես քաղաքական և հասարակական ոլորտի մասնագետների, այնպես էլ քաղաքական և քաղաքացիական հասարակությունների փորձագետների համար: Միաժամանակ, հետազոտության արդյունքները նպատակահարմար է օգտագործել ՀՀ-ում քաղաքական զարգացման և արդիականացման գործընթացում՝ որպես նոր որակի **էլիտայի ձևավորման, հավաքագրման և կերպափոխման** պայման: Այդ նպատակով ներկայացված և շրջանառված են **«քաղաքական զարգացման և արդիականացման զուգամիտում»**, «**քաղաքական էլիտայի կերպափոխման ճգնաժամ**», «**քաղաքական էլիտայի կերպափոխման և շրջաբերման տարանջատում**», «**ժողովրդավարական համախմբման ազգային մոդել**» եզրույթները: Աշխատանքն արժևորվում է նաև

նրանով, որ կատարված ուսումնասիրությունը քաղաքական և հանրային քաղաքականության վերլուծաբաններին, ինչպես նաև քաղաքական համակարգում ինստիտուցիոնալ փոփոխության պատասխանատու դերակատարներին հնարավորություն կտա նորացնելու իրենց մասնագիտական հմտությունները՝ կարևորելով քաղաքական էլիտայի կերպափոխման առանձնահատկությունները ըստ ներքին և արտաքին պայմանականների: Այն կարող է նպաստել քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարմանը, պետության արդիականացմանն ու ժողովրդավարության համախմբմանն ուղղված կարճաժամկետ ծրագրերի և ռազմավարական տեսլականի ձևավորմանն ու իրականացմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է քաղաքական էլիտաների կերպափոխման ճգնաժամի հետևանքով առաջացած ժողովրդավարական ինստիտուցիոնալ դիզայնի և ինստիտուտների փաստացի գործունեության միջև առկա խզման վերացմամբ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական արդյունքները փորձարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնում, դասավանդվել «Քաղաքական վերլուծություն և կանխատեսում» առարկայի շրջանակում:

Ատենախոսության հեղինակը հայկական պարբերականներում հրապարակել է 7 հոդված, որից մեկը՝ համահեղինակությամբ:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխանաբար երկու, երեք և երկու ենթագլուխներով, եզրակացությունից, հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից: Տեքստի ծավալը՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը՝ 195 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել են հետազոտվող թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթն ու պաշտպանության դրված հիմնական դրույթները: Ներկայացված են ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը, հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտն ու առարկան, ինչպես նաև տեսական և մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսության՝ «**Էլիտաների ուսումնասիրման տեսամեթոդաբանական հիմքերը անցում-համախմբում հարացույցի կայացման տիրույթներում**» խորագրով երկու ենթագլուխներից բաղկացած **առաջին գլխում** դիտարկված են էլիտաները՝ որպես քաղաքական զարգացման գլխավոր դերակատարներ, և քաղաքական էլիտայի հավաքագրման առանձնահատկությունները ժողովրդավարական անցումից համախմբման համատեքստում: Հիմնավորված է այն մոտեցումը, որ քաղաքական զարգացման ճգնաժամերի և անորոշությունների հաղթահարման, ինչպես նաև քաղաքական համակարգի բնականոն արդիականացման առումով առանցքային է էլիտաների դերը, որտեղ բնականոն արդիականացումը, ներառելով որակական փոփոխությունների շարունակական գործընթաց, ենթադրում է էլիտա–հասարակություն և էլիտա–էլիտա փոխհարաբերությունների շարունակական կերպափոխում: Տվյալ պարագայում որոշիչ նշանակություն է ունենում քաղաքական էլիտաների արժեշահային կերպը, մասնավորապես, նրանց հավաքագրման ձևը, տրամաբանությունը, ինչպես նաև սոցիալական բազան:

Առաջին՝ «**Էլիտաները որպես քաղաքական զարգացման գլխավոր դերակատար**» ենթագլխում ատենախոսը ներկայացրել է քաղաքական զարգացման բազմաչափությունը և այն պայմանավորող բազմաթիվ գործոններ: Որպես քաղաքական զարգացման բազմաչափ և բազմաշերտ գործընթացի շարժիչ ուժ՝ շեշտադրվել է էլիտայի տարբեր խմբերի դերակատարումը և նրանց գործառնման մակարդակը: Այս համատեքստում առանձնահատուկ ներկայացված է էլիտայի տեսության մաքիավելիստական դպրոցի հիմնադիրներ Վ. Պարետոյի, Գ. Մոսկայի և Ռ. Միխելսի մոտեցումները, որոնք զուգամիտված են Կ. Մանհայմի դիրքորոշումների հետ: Այսինքն, էլիտան կարևորված է ոչ միայն որպես գործունեության բարձրագույն ինդեքս ապահովող, այլ նաև հանրային արժեշահային համակարգի արդիականացման գլխավոր պատասխանատու: Վերոգրյալը հնարավորություն է տվել բացահայտելու քաղաքական զարգացման շրջափուլերին նախորդող բիֆուրկացիոն շրջաններում էլիտա–հասարակություն փոխհարաբերությունների կերպի և քաղաքական համակարգի որակական փոփոխությունների միջև ուղիղ կապը: Հիմնավորված է այն մոտեցումը, որ քաղաքական զարգացումը, որպես որակական փոփոխությունների շարունակական գործընթաց, ենթադրում է էլիտա-հասարակություն փոխհարաբերությունների շարունակական կերպափոխում: Այս դիտանկյունից փաստվում է, որ էլիտաների դերը պատմական զարգացման ողջ հոլովույթում, ինչպես քաղաքակրթական և մարդաբանական, այնպես էլ քաղաքական զարգացման շրջանակներում եղել և մնում է առանցքային:

Երկրորդ՝ «**Քաղաքական էլիտայի հավաքագրման առանձնահատկությունները ժողովրդավարական անցումից համախմբում համատեքստում**» ենթագլխում ատենախոսը համակարգված ներկայացրել է ժողովրդավարական անցման և համախմբման շրջանակներում էլիտաների հավաքագրման գործընթացի բազմաչափությունը, որտեղ մասնավորապես կարևորել է մերիտոկրատական մոտեցումը: Համակողմանիորեն բացահայտվել են քաղաքական էլիտաների հավաքագրման բաց և փակ (գիլդային) ուղիները ժողովրդավարական ձգձգված անցման շրջանակներում: Ուսումնասիրվել է քաղաքական զարգացման ճգնաժամերի և քաղաքական էլիտաների հավաքագրման նոր խողովակների ձևավորման միջև կապը: Ամբողջացնելով վերոնշյալ մոտեցումները՝ փաստվել է, որ ինչպես պետության կենսունակությունը, այնպես էլ ժողովրդավարական անցումը և համախմբման գործընթացի շարունակականությունը հիմնականում պայմանավորված են էլիտայի հավաքագրման կերպով և դրա հիմքում ընկած արժեքային բազմաչափությամբ:

Ատենախոսության «**Քաղաքական էլիտայի կերպափոխման բազմավեկտորությունը Հայաստանի Հանրապետությունում**» վերնագիրը կրող և երեք ենթագլխից բաղկացած **երկրորդ գլխում** ատենախոսը քննության է առել Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացը ժողովրդավարական անցման հարացույցի շրջանակներում: Ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման սահմանադրաիրավական հիմքերը՝ համեմատության մեջ վերլուծելով 1995 թ. ընդունված, ապա 2005 և 2015 թվականներին փոփոխված Սահմանադրության առանձնահատկությունները: Ընտրական գործընթացը դիտարկելով որպես քաղաքական էլիտայի կերպափոխման ինստիտուտ՝ համակողմանի վերլուծել է Հայաստանի Հանրապետությունում անցկացված բոլոր համապետական ընտրությունները: Կարևորված է այն փաստը, որ եթե ընտրական գործընթացը կրում է արարողակարգային բնույթ և միտված է միայն քաղաքական վերնախավի վերարտադրությանը, ապա անհնար է դառնում պարբերաբար դրսևորվող քաղաքական զարգացման ճգնաժամի (բաշխման, շարժունակության, մասնակցության, ինքնության, լեգիտիմության) հաղթահարումը:

Առաջին՝ «**Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացը ժողովրդավարական անցման հարացույցի շրջանակներում**» ենթագլխում ատենախոսն ուսումնասիրել է ԽՍՀՄ փլուզման և Հայաստանի Հանրապետության անկախացման արդյունքում ժողովրդավարական անցմամբ պայմանավորված սոցիալ-տնտեսական ճգնաժամի, տուրբուլենտությունների և քաղաքական անորոշությունների պայմաններում քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացը: Ցույց է տրվել, որ ժողովրդավարական անցման գործընթացը, մեծապես գտնվելով քաղաքական էլիտաների պատասխանատվության տիրույթում, ենթադրում է քաղաքական էլիտաների համարժեք կերպափոխում, որը պետք է տեղի ունենա ազգային ինքնության, հանրային և սեփական շահի զուգամիտման, ինչպես նաև կապիտալի բոլոր տեսակների հումանիզացման շրջանակներում: Ատենախոսը, ամբողջացնելով քաղաքական էլիտայի կերպափոխման տեսական և գործնական հիմքերը և վերլուծելով հասկացության կառուցվածքային ու բովանդակային բաղկացուցիչները, առաջարկել է

«քաղաքական էլիտայի կերպափոխման ճգնաժամ» նոր եզրույթը, որը սահմանվում է որպես *քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման և պետության բնականոն արդիականացման գերակայության շրջանակներում քաղաքական էլիտաների մարդաբանական, ռացիոնալ-իրավական և սոցիալ-հոգեբանական մակարդակներում համարժեք կերպափոխման անկարողություն:*

Երկրորդ՝ «**Քաղաքական էլիտայի կերպափոխման սահմանադրաիրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում**» ենթագլխում ատենախոսն արձանագրել է, որ 1995 թ. Սահմանադրության ընդունումից մինչ օրս տեղի ունեցած սահմանադրական դիզայնի փոփոխությունները և առավել համապատասխանեցումը ազատական ժողովրդավարության տրամաբանությանը էական ազդեցություն չեն ունեցել քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման և քաղաքական էլիտաների համարժեք կերպափոխման գործընթացի վրա: Ավելին, սահմանադրական դիզայնի փոփոխության պահանջի հիմքում ոչ թե ժողովրդավարական անցման և համախմբման, այլ քաղաքական վերնախավի վերարտադրման հատվածային հրամայականն էր: Փաստվել է նաև, որ այդ գործընթացները պայմանավորված էին ոչ թե սահմանադրաիրավական, այլ քաղաքական էլիտաների կերպափոխման և քաղաքական ինքնության ճգնաժամի հաղթահարման անկարողությամբ, ինչի հետևանքով ՀՀ-ում հաստատվեց և շարունակում է գործառնվել ժողովրդավարական անցման ձգձգվածության (չկայացածության) մոդելը:

Երրորդ՝ «**Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացը որպես քաղաքական էլիտայի կերպափոխման ինստիտուտ**» ենթագլխում ատենախոսը եզրահանգել է, որ ընտրական գործընթացը, որպես քաղաքական էլիտաների կերպափոխման ինստիտուտ, դեռևս կայացած չէ: Այն գործառնվում է որպես իշխող քաղաքական վերնախավի վերարտադրման ինստիտուտ, որը մինչ օրս շարունակում է մնալ կանխորոշված ընտրությունների արդյունքների արարողակարգային ապահովման և քաղաքական դասավորությունների *պատրանքային* լեգիտիմության գործընթաց: Հիմնավորվել է այն մոտեցումը, որ ընտրական գործընթացը, որպես էլիտայի կերպափոխման ինստիտուտ, կենսական նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի արդիականացման և քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման համար, որը, նվազեցնելով քաղաքական անորոշություններն ու տուրբուլենտությունները, բացառում է նաև լայն զանգվածների հեղափոխականացվածությունը:

Ատենախոսության **երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության թավշյա հեղափոխությունը որպես քաղաքական էլիտայի ժողովրդավարական կերպափոխման հրամայական»** գլուխը բաղկացած է երկու ենթագլխից, որոնցում ատենախոսը համակողմանի անդրադառնում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի առանցքային դերին՝ որպես ժողովրդավարական որակի ապահովման երաշխավոր և քաղաքական մշակույթի ժողովրդավարացման պատասխանատու: Ուսումնասիրվել են նաև ժողովրդավարության որակը և քաղաքական մշակույթի ժողովրդավարացումը պայմանավորող գործոններն ու փոփոխականները:

Առաջին՝ «**Հայաստանի Հանրապետության քաղաքական էլիտան որպես ժողովրդավարության որակի ապահովման երաշխավոր**» ենթագլխում հիմնավորված է այն մոտեցումը, որ Հայաստանի Հանրապետությունում ինդիգեն ինստիտուտների բացակայության, գծային ազատականացման և արևմտյան մոդելների մեխանիկորեն ներդրման հետևանքով չեն ապահովվել ինստիտուտների գործունեության արդյունավետությունը, բնականոն արդիականացումը և ժողովրդավարության որակը: Կարևորվել է նաև հասարակության կենսամակարդակի բարձրացման շարունակականության ապահովումը, քանի որ այն անմիջականորեն փոխկապակցված է սոցիումում ժողովրդավարական նորմերի աջակցության մակարդակի հետ: Հեղինակը, ամբողջացնելով վերլուծությունը, եզրահանգել է, որ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության որակը կարող է երաշխավորվել քաղաքական էլիտայի ինդիգենացումով (վերադարձ արմատներին, բնաշխարհիկացում)՝ այդ տրամաբանությամբ ձևավորված ռազմավարական տեսլականի և դրանից ածանցյալ հանրային բարիքի ստեղծման բարձր արդյունավետության միջոցով: Հետևաբար, քաղաքական էլիտայի ռազմավարական և նպատակամետ գործունեության արդյունքում միայն կարող են ձևավորվել ազգային կենսունակ ժողովրդավարական ինստիտուտներ՝ հիմնված արդյունավետ կառավարության, սոցիալ-տնտեսական համաչափ զարգացման և քաղաքական մասնակցության ինստիտուցիոնալացման վրա, որոնց ամբողջությունն էլ կարող է երաշխավորել ժողովրդավարության որակը Հայաստանի Հանրապետությունում:

Երկրորդ՝ «**Հայաստանի Հանրապետության քաղաքական էլիտան որպես քաղաքական մշակույթի ժողովրդավարացման պատասխանատու**» ենթագլխում ուսումնասիրված է քաղաքական մշակույթի ժողովրդավարացման անհրաժեշտությունը քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման և ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացի շրջանակներում: Արձանագրվել է, որ քաղաքական կոնսենսուսի ինստիտուտի բացակայության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում հաստատված է «զրոյական արդյունքով խաղ», իսկ քաղաքական մշակույթը ընդհանուր առմամբ բնութագրվում է որպես սահմանափակ հպատակային: Ատենախոսը հիմնավորել է, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքական մշակույթի ժողովրդավարացումը կարող է երաշխավորվել միայն շարունակական և բազմամակարդակ էվոլյուցիոն զարգացման արդյունքում, որը հիմնված կլինի ազգային ինստիտուտների շրջանակներում հարատև սոցիալականացվող քաղաքական էլիտաների վրա: Էվոլյուցիոն տրամաբանություն ենթադրող այդ գործընթացը հնարավորություն կտա քաղաքական էլիտաներին ապահովելու քաղաքական մշակույթի շարունակական ժողովրդավարացումը, որը հիմնված կլինի մի կողմից «պետություն-հասարակություն-անհատ», մյուս կողմից՝ «ինստիտուտ-կառուցվածք-գործառույթ» փոխկապակցված համակարգային արդիականացման վրա:

«**Եզրակացություն**» մասում ամփոփված են ատենախոսության արդյունքները, որոնց հիման վրա կատարված են առաջարկություններ: Ստացված արդյունքներից հարկ է առանձնացնել հետևյալները.

1. Թեև Հայաստանի Հանրապետությունում տասնամյակների ընթացքում դրվել են սահմանադրահիրավական անհրաժեշտ հիմքերը պետական, քաղաքական և

հասարակական մակարդակներում արդյունքի ստեղծման և կառավարման համար, այնուամենայնիվ, նշյալ մակարդակներում չի ձևավորվել իրավակիրառ պրակտիկա, ինչը զրոյացրել է սահմանադրական և օրենսդրական փոփոխությունների պահանջը ներքևից հավաքագրելու հնարավորությունը: Քաղաքական էլիտայի արդյունքահեն կառավարման տեսանկյունից իրավակիրառ մեխանզմների ներդրումը պատմական փորձառությունը վերարժևորելու և ազգ-պետության լինելիության և գործառնության իրավունքը տվյալ ժամանակի և տարածության մեջ հիմնավորելու բացառիկ հնարավորություն է: Սահմանադրությունն առաջին հերթին քաղաքական գործընթաց է, սահմանադրական, խորհրդարանական և քաղաքակն մշակույթների փոխազդեցության արդյունք և ոչ միայն իրավական նորմերի ամբողջություն: Սահմանադրության դիտարկումը բացառապես իրավական տեսանկյունից ինքնանպատակ է, քանի որ չի ապահովում այն տարածությունը, որտեղ պետք է ձևավորվի և կայանա քաղաքական և քաղաքացիական մշակույթը: ՀՀ ժողովրդավարական անցման պայմաններում քաղաքացիական, քաղաքական և սահմանադրական մշակույթի հաստատումը ենթադրում է լեգիտիմության ձգտող քաղաքական էլիտայի առկայություն, որի համար որոշիչ է քաղաքական համակարգի կերպափոխման գործընթացում պոլիարխիկ արժեքների ներդրումը հասարակական գիտակցության մեջ: Հեղափոխական, կոռումպացված, մարգինալացված մթնոլորտը չի նպաստում ո՛չ քաղաքացիական, ո՛չ սոցիալական և ո՛չ էլ մշակութային երկխոսությանը: Այս պայմաններում արդյունքի կառավարումը բախվում է քաղաքական էլիտաների կերպափոխման խորքային ճգնաժամերի, ինչը հետևանք է ժողովրդավարական ինստիտուտների մեխանիկական ներդրման, որոնք ոչ թե լեգիտիմացվել են իսկության մեջ գոյություն ունեցող արդիականացման հիմնախնդիրների հաշվարկման հենքով, այլ հիմնավորվել են «լավագույն փորձի» ներդրման տրամաբանությամբ՝ առաջացնելով պատրանքային ինստիտուցիոնալ դիզայնի և փաստացի գործընթացների տարամիտվածություն:

2. ՀՀ-ում քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման և ժողովրդավարական համախմբման համատեքստում սահմանադրական դիզայնի փոխակերպումը (շարունակական ժողովրդավարացման նպատակներով) կարող է ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ, սակայն դա դեռևս չի երաշխավորում ցանկալի արդյունք: Միտված լինելով քաղաքական կայունության ապահովմանը և քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարմանը՝ կիսանախագահական կառավարման ձևից խորհրդարանականին անցումը ոչ միայն չլուծեց առաջադրված հիմնախնդիրները, այլև խորացրեց քաղաքական դերակատարների միջև փոխըմբռնման վակուումը և քաղաքական համակարգը տեղափոխեց քաղաքական անորոշությունների նոր փուլ: Վերջինս իր գագաթնակետին հասավ զանգվածային անհնազանդությունների և ցույցերի արդյունքում, 2018 թ. ապրիլի 23-ին՝ ՀՀ նորընտիր վարչապետ Ս. Սարգսյանի հրաժարականից հետո: Այդ գործընթացները հանգեցրին ինստիտուցիոնալ հիշողության խզման վտանգի և ոչ ինստիտուցիոնալ ու անորոշ գործիքակազմով էլիտաների հավաքագրման շարունակականության:

3. Հետկոմունիստական երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության անցումային գործընթացների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ անկախության հռչակումից ի վեր ինստիտուցիոնալ փոխակերպումները տեղի են ունեցել արտաքին գործոնները (գծային ազատականացումը՝ որպես ունիվերսալ բաղադրատոմս, ժողովրդավարացման արևմտյան մոդելները, սահմանադրական իզոմորֆիզմը, արժեքային հեղափոխությունները և այլն) որպես համակարգի ներծին «պատրանքային» չափորոշիչներ համարելու հետևանքով: «Արդիականացում առանց զարգացման» հարացույցի կիրառման հետևանքով հաստատվել է «բարեհաջող ձախողում» (successful failure) երևույթը՝ հանգեցնելով պետական և քաղաքական ինստիտուտներում անձնավորման, կլիենտելիզմի և հովանավորչական հարաբերությունների ձևավորման ու խորացման, ինչպես նաև վտանգելով քաղաքական համակարգի կայունությունը՝ ներքին և արտաքին դերակատարների խիստ իրավիճակային և հեղափոխականացված մտահայեցողությամբ և վարքային մոդելներով կառավարման պայմաններում:

4. Քաղաքական էլիտաների կողմից ժողովրդավարության որակի երաշխավորման համատեքստում կարևորվում է դելեգատիվ կամ պոպուլիստական ժողովրդավարությունից անցումը ներկայացուցչական կամ համախմբված ժողովրդավարության, ինչը ենթադրում է բազմամակարդակ գործընթաց՝ ինստիտուցիոնալացված քաղաքական մասնակցության և լեգիտիմության ապահովումից մինչև պետության կարողունակության (State Capability) երաշխավորման ընդարձակ միջակայքը: Այս առումով Հայաստանում ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացում անհրաժեշտ է ձևավորել ժողովրդավարացման հայկական մոդել՝ տարբերակելով կառավարման քաղաքական և վարչական ընթացակարգերը: Քաղաքական ընթացակարգերը պետք է փոխակերպեն գործող խաղի կանոնները՝ հանգեցնելով պոլիարխիկ էլիտայի ձևավորման, որը ենթադրում է տրոհվածից դեպի փոխհամաձայնեցված և ինտեգրված ընտրանու իրատես քաղաքական գործունեություն: Այս տեսանկյունից, կարծում ենք, նպատակահարմար են Ռ. Պուտնամի քաղաքական էլիտայի ինտեգրման չափումները (սոցիալական միատարրություն, հավաքագրման ընդհանուր օրինաչափություններ, միջանձնային փոխազդեցություններ, կոնսենսուս արժեքների շուրջ, խմբային համերաշխություն, ինստիտուցիոնալ համատեքստ) հավելել հետևյալով. իշխանության խաղաղ և շահադրդված փոխանցում, պատմական և ինստիտուցիոնալ հիշողության տեղայնացում քաղաքական և վարչական ընթացակարգերում, համակեցության նորմերի հաստատում հանուն կարգի պահպանման, համերաշխություն հանուն համագործակցության: Վարչական ընթացակարգերը, իրենց հերթին, պետք է միտված լինեն այնպիսի մեխանիզմների և գործիքակազմի մշակման, որոնք հնարավորություն կտան չափելի դարձնելու իրավական, ինստիտուցիոնալ, սոցիալ-մշակութային կառուցակարգերի տեղայնացման հիմնախնդիրները, հաշվառելու փորձի-սխալի կառավարման հարացույցի շրջանակներում ի հայտ եկած հետևանքները, ինչպես նաև հաշվառելու պատմականությունը՝ ապագան հիշելու և գալիք ճգնաժամերը հաղթահարելու նպատակով: ՀՀ ժողովրդավարական անցման պայմաններում

քաղաքական էլիտայի գործունեությունը երկշերտ է. այն բաղկացած է մտածող (ինտելեկտուալ-ռազմավարական) և կատարող (վարչաբյուրոկրատական) խմբերից: Ժողովրդավարական անցմանը բնորոշ քաղաքական իշխանությունը պարբերաբար հայտնվում է անորոշության մեջ, որից դուրս գալու տարբեր սցենարներ են հնարավոր: Անկախ նրանից, թե անորոշությունից դուրս գալու ո՛ր սցենարը կգործի, ՀՀ կառավարման համակարգի անվտանգությունը և կայուն զարգացումը պահանջում են քաղաքականապես չեզոք բյուրոկրատական համակարգի կայացում: Վերջինիս հարաբերականորեն ինքնուրույն գործունեությունը ենթադրում է ամբողջական իրավական դաշտի առկայություն՝ ՀՀ Սահմանադրությունում իշխանության ճյուղերի հստակ տարանջատումից մինչև քաղաքացիական ծառայության, հասարակական, քաղաքական կազմակերպությունների մասին առկա օրենքների, ընտրական օրենսգրքի և այլ նորմատիվ-իրավական ակտերի հստակեցում:

5. Հաշվի առնելով ՀՀ-ում ժողովրդավարական ինստիտուտների ֆորմալ կայացվածությունը և «թավշյա հեղափոխությունից» հետո ձևավորված պատվիրակված (դելեգատիվ) ժողովրդավարության իրողությունը՝ քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման գործընթացն առաջարկում ենք դիտարկել ոչ թե առկա կառուցվածքա-գործառնական, այլ վարքաբանական և նեովարքաբանական տրամաբանության շրջանակներում՝ կառուցվածք-դերակատար (structure/agency) դիխոտոմիայում առաջնային կարևորություն տալով դերակատարներին, որտեղ հավասարապես կկարևորվի քաղաքական էլիտաների շարունակական ինդիգենացումը: Թեև քաղաքագիտության մեջ համարվում է, որ «դերային» մոտեցման գործոնները բնորոշ են ժողովրդավարական անցմանը, իսկ «կառուցվածքային» մոտեցման գործոններն արդիական նշանակություն ունեն համախմբման գործընթացում, այնուամենայնիվ, հարկ ենք համարում փաստել, որ, համաձայն հետխորհրդային երկրների կերպափոխման գործընթացների փորձառության, «կառուցվածքային» գործոնները նախորոշում են դերային գործոնների զարգացման միտումները անցման գործընթացի բոլոր փուլերում: Այլ կերպ ասած, «կառուցվածքային» գործոնները նախորոշում են հասարակական և ինստիտուցիոնալ ներուժը քաղաքական արդիականացման գործընթացներում և մեծ ազդեցություն ունեն քաղաքականության դերակատարների վարքային մոդելների զարգացման գործում:

6. ՀՀ-ում քաղաքական էլիտաների կողմից արևմտյան քաղաքական ինստիտուտներից փոխառված մոդելների գծային ներդրումը հանգեցրել է քաղաքական մշակույթի շարունակական արդիականացման խզմանը՝ խեղաթյուրելով քաղաքական մշակույթի կարևորագույն բաղկացուցիչներից մեկը՝ քաղաքական կոնսենսուսի ինստիտուտը: Այդ իրողության շրջանակում ՀՀ-ում հաստատված է դեռևս անհաղթահարելի «զրոյական արդյունքով խաղը», որը ամրապնդվեց որպես քաղաքական մշակույթի առանցքային բնորոշիչ: Այս հիմնախնդիրներով պայմանավորված՝ առաջարկվում է զերծ մնալ արևմտյան մոդելների հայելային ներդրման քաղաքականությունից և ձևավորել քաղաքական մշակույթի ժողովրդավարացման սեփական (ինդիգեն) մոդելը, որի հիմքում ընկած

կլինի անտագոնիստական համագործակցությունը: Այս համատեքստում անհրաժեշտ է, որ հայաստանյան քաղաքական էլիտան քաղաքական մշակույթի ժողովրդավարացման նպատակով մշակութային համահարթեցումը մշակութային համագործակցության հարացույցով փոխարինելու կամք ցուցաբերի՝ հաշվի առնելով, որ զարգացումը դեռևս չի ենթադրում մշակութային համակարգերի կոնվերգենցիա:

7. Քաղաքական մշակույթի ժողովրդավարացման կերպն ու հետագիծը պայմանավորված են ինչպես անվտանգային բազմամակարդակ գործոններով, որոնք փոխկապակցված են հասարակության կողմից ժողովրդավարական նորմերի աջակցման մակարդակի հետ, այնպես էլ կրթական համակարգի՝ որպես սոցիալականացման և վերասոցիալականացման ռազմավարական ինստիտուտի բնույթով: Այս պարագայում առանցքային է ինչպես անձի և հասարակության, այնպես էլ քաղաքական էլիտայի առաջնահերթությունների ձևավորումն ու դրանցով պայմանավորված քաղաքական մասնակցությունը, որի հիմքում ընկած կլինի մրցունակ ինդիգեն կրթական համակարգը: Պատմականության հաշվառման և ինդիգեն արժեշահային համակարգի շարունակական արդիականացման վրա հիմնված մրցունակ կրթական համակարգը հնարավորություն կտա հաղթահարելու անհատի մարգինալացումն ու ազգային ինքնության հատվածային ընկալումները, որոնք անմիջականորեն արտացոլվում են քաղաքական մշակույթում: Այն իր հերթին քաղաքական էլիտաներին հնարավորություն կտա քաղաքական մշակույթի ժողովրդավարացումն ընկալելու որպես ինքնության և քաղաքական համակարգի արդիականացման շարունակական գործընթաց և ոչ թե մշակութային մոդելների հայելային ներդրման մրցավազք:

8. ՀՀ-ում «թավշյա հեղափոխության» արդյունքում քաղաքական էլիտաների սոցիալական բազայի փոփոխությամբ, դելեգատիվ ժողովրդավարության հաստատմամբ, իրականացվող նեոլիբերալ քաղաքականությամբ ու իշխանության բարձր լեգիտիմությամբ պայմանավորված՝ հաստատվել է քաղաքական լիդերության ու իշխանության իրականացման նեոպոպուլիստական կերպը: Քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման և ժողովրդավարական համախմբման համատեքստում կարևորվում է քաղաքական էլիտաների կողմից լիդերության ինստիտուտի նեոպոպուլիստականից ռացիոնալ-իրավականի կերպափոխման երաշխավորումը: Այն հնարավորություն կտա ոչ միայն հաղթահարելու քաղաքական զարգացման ձգձգված ճգնաժամը, այլ նաև սկիզբ դնելու պատասխանատվության ինստիտուցիոնալացման գործընթացին:

9. Գլոբալ օրակարգի, ժողովրդավարության անցման և համախմբման, ինչպես նաև էվոլյուցիոն և շարունակական արդիականացման հարացույցի շրջանակներում բազմամակարդակ անորոշություններից և համակարգային տուրբուլենտությունից խուսափելու նպատակով առաջարկվում է վերաիմաստավորել «արդի»-ի և կոսմոպոլիտիզմի իմացաբանական եզրերը, որտեղ «արդի»-ն ենթադրում է «աշխարհի բացություն», իսկ կոսմոպոլիտիզմը, լինելով «արդի»-ի ասպեկտներից միայն մեկը, ընդհանուր առմամբ, համաշխարհային մշակութային հարստության միջոցով նախկինում անհայտի ճանաչողության և իմացության մեթոդ է:

Կոսմոպոլիտիզմը և «արդի»-ի բազմաչափությունը չեն ենթադրում պատմականության մերժում, գծային ազատականացում և անպատասխանատվությամբ ուղեկցվող աշխարհաքաղաքացիության «դավանում»: Ավելին, դրանք ինդիգեն մշակույթի և քաղաքական ինքնության բնականոն արդիականացման արդյունքում ձևավորված արդյունավետ համագործակցության մոդելների ամբողջություն են, որոնք նաև հնարավորություն են տալիս քաղաքական մշակույթը զուգամիտելու քաղաքական կառուցվածքի հետ՝ հաղթահարելով գծային կախվածությունը արևմտյան արդիության՝ որպես «միակ ճշմարիտ» մոդելից:

10. Կառավարող էլիտաների ձեռքում բազմաբնույթ ռեսուրսների չափազանց մեծ կենտրոնացումը դրդում է ընդդիմությանը հանդես գալու ոչ թե որպես քաղաքական ընդդիմախոսներ, այլ որպես հեղափոխական շարժումներ: Կառավարող էլիտաների և ընդդիմադիրների կոշտ դիմակայությունը էլիտայի մշակութաքաղաքական բազմատարրության հետևանք է, որի տարբեր խմբերը կողմնորոշված են դեպի տարաբնույթ արժեքներ: Գաղափարական հակազդեցությունն ուղեկցվում է տնտեսական գործոններով՝ մասնավոր սեփականություն, մրցակցություն, շուկա և այլն՝ պայմանավորված շահերի բյուրեղացման գործընթացով: Ակնհայտ է, որ չձևավորված քաղաքացիական հասարակության պայմաններում գերիշխում է մշակութա-գաղափարական շարժառիթը. կառավարող ընտրանու և ընդդիմադիրների երկխոսությունը տեղի է ունենում ոչ թե իրատես, այլ զգացմունքային և խորհրդանշական հիմքով: Կառավարող էլիտայի ձգտումը՝ մենաշնորհային կերպով վերահսկել քաղաքական գործընթացը, ընդդիմության շրջանում առաջ է բերում արմատական միջոցներ կիրառելու համոզմունք՝ ճանաչելու կառավարող էլիտային: Դրանով իսկ ընդդիմությունը լեգիտիմացվում է և, չընկալվելով սոսկ որպես հեղափոխական ուժ, մասնակցում է քաղաքական կուրսի մշակմանը առնվազն կարծիք հայտնելու եղանակով: Ընդ որում, անհատական և խմբային նույնականացման, ավանդական սոցիալական կապերի և ձևերի խզման հետևանքով հասարակության մեջ պահպանվող ու ահագնացող մարգինալացումը մեծացնում է քաղաքական փոխազդեցության զգացմունքային և խորհրդանշական գործոնների նշանակությունը: Դրանց գերիշխումն էլ երկրորդ պլան է մղում իրատեսական որոշումների ընդունումն ու իրագործումը: Սրանով էլ բացատրվում է ժողովրդավարական անցման գործընթացում բարեփոխումների թույլ դինամիկան և ընդունվող քաղաքական որոշումների կատարման ցածր արդյունավետությունը:

11. ՀՀ ժողովրդավարական անցման արդյունավետությունը պայմանավորված է այդ գործընթացի գիտական հիմնավորվածությամբ և քաղաքական էլիտայի պրոֆեսիոնալիզմով: Այն ենթադրում է, որ ժողովրդավարացման գործընթացը, հրաժարվելով «փորձի և սխալի» հարացույցից, պետք է հենվի «գիտավերլուծական» հարացույցի օգնությամբ զարգացած և զարգացող երկրների փորձի գիտական իմաստավորման և վերլուծության, տեսական հայեցակարգերի, ձևավորված գաղափարների, քաղաքական գործընթացի իրատես

ժողովրդավարացման վերաբերյալ մշակված պրակտիկ առաջարկությունների և հանձնարարականների վրա:

Վերոշարադրյալ *եզրակացությունները* հնարավորություն են տալիս ներկայացնելու հետևյալ **առաջարկությունները**.

«Գիտավերլուծական» պարադիգմայի օգնությամբ իրականացվող բարեփոխումների համար կարևոր նշանակություն ունի քաղաքական կանխատեսումների գիտական փորձաքննության անցկացումը համապատասխան գիտական հաստատությունների և/կամ ուղեղային կենտրոնների կամ առանձին գիտնականների կողմից, որի հիմնական նպատակը քաղաքական էլիտայի իշխանության իրականացման մշակույթի և բարեփոխումների որակական հատկանիշների բարձրացմանն աջակցելն է: ՀՀ-ում քաղաքական էլիտաների կերպափոխման ճգնաժամի հաղթահարման, էլիտաների բաց հավաքագրման, էլիտա-հասարակություն, էլիտա-էլիտա փոխգործակցության կենսունակ և ռազմավարական մոդելների ձևավորման համատեքստում առաջարկվում է ստեղծել «էլիտաների հետազոտությունների ինստիտուտ» (այսուհետ՝ ինստիտուտ), որը կիրականացնի ուսումնասիրություններ և հետազոտություններ, ինչպես նաև գիտահետազոտական և գործնական ծրագրեր՝ ուղղված՝

- էլիտաների հավաքագրման գործընթացի ուսումնասիրմանը.
- տիպաբանորեն տարբեր էլիտաների միջև փոխհարբերությունների վերլուծությանը.
- կառավարող էլիտաների կառուցվածքի և բնութագրիչների բացահայտմանը.
- էլիտաների կերպափոխման, շրջաբերության և փոփոխության պայմանականների ու ապագայի հիմնախնդիրների բացահայտմանը.
- սոցիալականացման, վերասոցիալականացման և ինքնության բնականոն արդիականացման գործընթացում էլիտաների ինստիտուցիոնալ դերակատարման զարգացմանը:

Ինստիտուտն իր գործունեությամբ կնպաստի՝

1. էլիտաների ուսումնասիրության միասնական պլատֆորմի կայացմանը.
2. էլիտաների միջև արդյունավետ փոխգործակցության մեխանիզմների մշակմանը.
3. էլիտաների կերպափոխման փիլիսոփայության մոդելավորմանը.
4. էլիտաների ժողովրդավարական (բաց) հավաքագրման մեխանիզմների ձևավորմանը.
5. էլիտաների քաղաքական ինքնության և պետության բնականոն արդիականացման գործընթացների ռազմավարության մշակմանը.
6. էլիտա-հասարակություն փոխհարաբերությունների մոդելավորմանը.
7. էլիտաների՝ որպես սոցիալ-քաղաքական կյանքի արդիականացման պատասխանատուների հաստատմանը:

Ամփոփելով՝ նշենք, որ Հայաստանի առջև պատմական խնդիր է ծառացել, այն է՝ հաղթահարել աշխարհաքաղաքական և տարածաշրջանային

մարտահրավերները՝ երաշխավորելով Հայաստանի Հանրապետության համալիր անվտանգությունն ու բնականոն արդիականացումը: Զարգացման այս սցենարն ակնհայտորեն չի կարող լինել ո՛չ արևմտյան՝ ազատական, ո՛չ էլ արևելյան՝ մեկուսախմբային-հովանավորչական: Այն պետք է լինի ներառական՝ առանցքում պահելով հայկական օրակարգը և հնարավորություն տալով քաղաքական էլիտային՝ ընկալելու և ներառելու գլոբալ օրակարգերը՝ միաժամանակ պահպանելով ազգային արժեքային համակարգի էությունն ու ինքնատիպությունը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից **հրապարակված** հետևյալ **գիտական աշխատություններում**.

1. **Պետրոսյան Ս.**, ԼՂՀ պետականաշինությունը որպես քաղաքական համակարգի բնականոն արդիականացման գործընթաց, ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները, Միջազգային երիտասարդական գիտաժողով, 15-18 սեպտեմբերի, 2016 թ., Արցախ (ԼՂՀ), ք. Ստեփանակերտ, նյութերի ժողովածու, էջ 139-142:
2. **Պետրոսյան Ս.,** Կառավարող ընտրանին որպես Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի արդիականացման դերակատար. ՀՀ ՊԿԱ, Հանրային կառավարում» գիտական հանդես, N 1, «Պետական ծառայություն», Երևան, 3/2016, էջ 192-196:
3. **Պետրոսյան Ս.,** Արցախի Հանրապետության քաղաքական ընտրանու հրամայականները բանակցային գործընթացում, «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով, 14-17 սեպտեմբերի, 2017 թ., Արցախ (ԼՂՀ), ք. Ստեփանակերտ, նյութերի ժողովածու, էջ 161-164:
4. **Պետրոսյան Ս.,** Հայաստանի Հանրապետությունում ընտրանու դերը քաղաքական սոցիալականացման գործընթացում, ՀՀ ՊԿԱ «Հանրային կառավարում» գիտական հանդես, N 3, «Պետական ծառայություն», Երևան, 2018, էջ 222-229:
5. **Մարգարյան Մ., Պետրոսյան Ս.**, Քաղաքական արդիականացում. ընտրանի-հասարակություն փոխհարաբերությունների հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ ՊԿԱ «Հանրային կառավարում» գիտական հանդես, N 1, «Պետական ծառայություն», Երևան, 2019, էջ 203-215:
6. **Պետրոսյան Ս.,** Հայաստանի Հանրապետությունում ընտրանու կերպափոխման հիմնախնդիրները ժողովրդավարական անցումից-համախմբման համատեքստում, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ ՊԿԱ «Հանրային կառավարում» գիտական հանդես, N 1, «Պետական ծառայություն», Երևան, 2019, էջ 358-366:
7. **Պետրոսյան Ս.,** Քաղաքական ընտրանիների հավաքագրման հիմնախնդիրները ժողովրդավարական անցման և համախմբման համատեքստում, ՀՀ ՊԿԱ «Հանրային կառավարում» գիտական հանդես, N 1, «Պետական ծառայություն», Երևան, 2023, էջ 190-203:

ПЕТРОСЯН СУРЕН РАФИКОВИЧ

ПРОБЛЕМЫ ТРАНСФОРМАЦИИ ПОЛИТИЧЕСКОЙ ЭЛИТЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 «Политические институты и процессы».
Защита диссертации состоится в 14:00, 30 апреля 2025 г. в специализированном совете 056 «Политология и международные отношения» МОНКС КВОН РА, действующем в Ереванском государственном университете (адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1)

РЕЗЮМЕ

Во введении обоснованы актуальность исследуемой темы, цели и задачи, научная новизна и основные положения, поставленные на защиту. Представлены теоретическая и практическая значимость диссертации, степень разработанности проблемы, объект и предмет исследования, а также его теоретические и методологические основы.

В первой главе диссертации, под названием «Теоретико-методологические основы изучения элит в рамках парадигмы транзита и консолидации», которая состоит из двух параграфов, рассматриваются элиты как основные акторы политического развития, а также особенности рекрутирования политической элиты в контексте перехода от демократического транзита к консолидации. Обосновывается подход, согласно которому роль элит является ключевой в преодолении кризисов и неопределенностей политического развития, а также в рамках эволюционной модернизации политической системы, где последняя, охватывая процесс качественных изменений, предполагает непрерывную трансформацию отношений элита-общество и элита-элита. В данном случае решающее значение имеет характер ценностей и интересов политических элит, в частности, форма их рекрутирования, логика, а также социальная база.

Во второй главе диссертации, под названием «Многовекторность трансформации политической элиты в Республике Армения», состоящей из трех параграфов, диссертант исследует процесс трансформации политической элиты в Республике Армения в рамках парадигмы демократического транзита. Изучены конституционно-правовые основы трансформации политической элиты в Республике Армения путём сравнительного анализа особенностей Конституции, принятой в 1995 году и измененной в 2005 и 2015 годах. Путём рассмотрения избирательного процесса как института трансформации политической элиты всесторонне проанализированы все общенациональные выборы, проведенные в Республике Армения. Подчеркивается, что если избирательный процесс носит протокольный характер и направлен лишь на воспроизводство управляющего класса, то становится невозможным преодоление периодически проявляющихся кризисов политического развития (распределения, мобильности, участия, идентичности, легитимности).

В третьей главе диссертации, под названием «Избирательный процесс в Республике Армения как институт трансформации политической элиты», диссертант заключает, что

избирательный процесс как институт трансформации политических элит еще не состоялся. Он функционирует как институт воспроизводства управляющего класса, который до сих пор остается процессом протокольного обеспечения предопределенных результатов выборов и *иллюзорной* легитимности политической конфигурации. Обосновывается подход, согласно которому избирательный процесс как институт трансформации элиты имеет ключевое значение для эволюционной модернизации политической системы Республики Армения и преодоления кризиса политического развития, который, снижая политическую неопределенность и турбулентность, также исключает революционность широких масс.

Обоснован подход, согласно которому в результате применения парадигмы «Модернизация без развития» в Республике Армения установился феномен «успешного провала» (successful failure), приведший к персонализации в государственных и политических институтах, формированию и углублению клиентелизма и патронажа, также ставящий под угрозу стабильное развитие политической системы.

Диссертант, обобщая теоретические и практические основы трансформации политической элиты и анализируя структурные и содержательные компоненты понятия, предлагает новое понятие «кризис трансформации политической элиты», которое определяется как *неспособность политических элит к трансформации на антропологическом, рационально-правовом и социально-психологическом уровнях в условиях приоритетности преодоления кризиса политического развития и эволюционной модернизации государства*.

Изучена необходимость адекватной трансформации политической элиты в институциональном, цивилизационном, антропологическом и социально-психологическом измерениях. Без урегулирования этих факторов преодоление кризисов политического развития в Республике Армения не представляется возможным. Диссертант обосновывает подход, согласно которому кризисы возможно преодолеть, если трансформирующаяся элита конвергирует национальную, политическую, гражданскую и цивилизационную идентичности.

SUREN RAFIK PETROSYAN

THE ISSUES OF POLITICAL ELITE TRANSFORMATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Dissertation under 23.00.02 - "Political Institutions and Processes" aspiring to earn PhD in Political Sciences.
The defense of the dissertation will take place at 2:00 p.m., April 30, 2025, at the session of Specialized Council 056 specializing in "Political Sciences and International Relations" of the MoESCS Higher Education and Science Committee of the RA YSU (Address: Republic of Armenia, Yerevan, 0025, 1 Alex Manoogian 1)

SUMMARY

The introduction substantiates the relevance of the topic under study, goals and objectives, scientific novelty and the main provisions submitted for defense. The theoretical and practical significance of the dissertation, the degree of development of the problem, the object and subject of the study, as well as its theoretical and methodological foundations are presented.

The **first chapter** of the dissertation entitled **"Theoretical and methodological foundations of the study of elites within the framework of the paradigm of transit and consolidation"**, which consists of two paragraphs, examines elites as key agents of political development, as well as the specifics of recruiting the political elite in the context of the transition from democratic transit to consolidation. The author substantiates the approach according to which the role of elites is key in overcoming crises and uncertainties of political development, as well as in the framework of the natural modernization of the political system, where the latter, encompassing a continuous process of qualitative changes, presupposes a constant transformation of elite-society and elite-elite relations. In this case, the nature of the values and interests of the political elites is crucial, in particular, the form of their recruitment, logic, and social base.

In the **second chapter** of the dissertation, entitled **"The multi-vector transformation of the political elite in the Republic of Armenia"**, consisting of three paragraphs, the dissertation examines the process of transformation of the political elite in the Republic of Armenia within the framework of the paradigm of democratic transit. The constitutional and legal foundations of the transformation of the political elite in the Republic of Armenia have been studied through a comparative analysis of the features of the Constitution adopted in 1995 and amended in 2005 and 2015. By considering the electoral process as an institution of transformation of the political elite, all the national elections held in the Republic of Armenia have been comprehensively analyzed. The fact is emphasized that if the electoral process is of a ritual nature and is aimed only at reproducing the political elite, then it becomes impossible to overcome periodically emerging crises of political development (distribution of benefits, mobility, participation, identity, legitimacy).

In the **third chapter** of the dissertation, entitled "**The electoral process in the Republic of Armenia as an institution for the transformation of the political elite**", the dissertation concludes that the electoral process as an institution for the transformation of political elites has not yet taken place. It functions as an institution of reproduction of the ruling political elite, which still remains a process of ritually ensuring predetermined election results and the illusory legitimacy of the political configuration. The author substantiates the approach according to which the electoral process as an institution of elite transformation is vital for the modernization of the political system of the Republic of Armenia and overcoming the crisis of political development, which, by reducing political uncertainty and turbulence, also excludes the revolutionary character of the broad masses.

The approach is substantiated, according to which, as a result of the application of the «Modernization without development» paradigm, the phenomenon of «successful failure» has been established in the Republic of Armenia, which has led to personalization in state and political institutions, the formation and deepening of clientelism and patronage, and also endangers the stability of the political system in the face of an extremely situational and revolutionized worldview and behavioral models of internal and external actors.

The dissertation, summarizing the theoretical and practical foundations of the transformation of the political elite and analyzing the structural and substantive components of the concept, proposes a new concept «crisis of transformation of the political elite», which is defined as *the inability of political elites to adequately transform at the anthropological, rational-legal and socio-psychological levels in terms of the priority of overcoming the crisis of political development and natural modernization of the state.*

The necessity of adequate transformation of the political elite in the institutional, civilizational, anthropological and socio-psychological dimensions is studied. It is not possible to overcome the crises of political development in the Republic of Armenia without addressing these factors. The dissertation substantiates the approach according to which crises can be overcome if the transforming elite converges national, political, civil and civilizational identities.